

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.3/[84308]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ
ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Տ. Սարգսյան	ՀՀ վարչապետ
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Կ. Ավագյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Կիրակոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ա. Բերբերյան	ՀՀ Նախագահի խորհրդականի օգնական
Ա. Վարդանյան	«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ա. Անանյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Տեր-Հովակիմյան	Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն

բացակայում էին՝

Հ. Հակոբյան	ՀՀ սփյուռքի նախարար
Վ. Սարգսյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

1. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2010 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացության մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ աուդիտն իրականացվել է «ՍՕՍ-աուդիտ» ընկերության կողմից և տրվել դրական եզրակացություն:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «ՍՕՍ-աուդիտ» ընկերության կողմից կատարված աուդիտորական հաշվետվությունը,

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել «ՍՕՍ-աուդիտ» ընկերության՝ ղեկավարությանն ուղղված նամակը,

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ժամանակ ապահովել աուդիտ իրականացրած կազմակերպության համապատասխան ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը:

2. Հիմնադրամի 2010 թվականի տարեկան հաշվետվության մասին

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ 2010 թվականի տարեկան հաշվետվությունը բաղկացած է հետևյալ 3 բաժնից՝

1) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կառավարման համակարգի ընդհանուր կառուցվածքից.

2) 2010 թվականի ընթացքում իրականացված ծրագրերից: Ընդ որում, ըստ էության դրանք 6 ամսվա գործունեության արդյունքներ են, քանի որ հիմնադրամի գործադիր

տնօրենի փոփոխությունից հետո հաստատվեցին նոր ծրագրեր և բյուջե: Ընդհանուր առմամբ իրականացվել է մոտավորապես 32 ծրագիր՝ 68.0 մլն դրամ արժողությամբ:

3) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաշվեկշռից և ըստ ոլորտների ծրագրային բաշխումներից:

Այսպիսով նա նշեց, որ երիտասարդների շրջանում անց կացված հարցումների արդյունքներով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2010 թվականի գործունեությունը գնահատվել է արդյունավետ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ՀԵՀ 2010 թվականի տարեկան հաշվետվությունը,

2) Հիմնադրամի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ինդիկատորներ, որոնք թույլ կտան գնահատել ծրագրերի արդյունավետությունը:

3. Հիմնադրամում ֆինանսական ծառայության և հասարակայնության հետ կապերի ծառայության հիմնում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և առաջարկեց հիմնել ֆինանսական և հասարակայնության հետ կապերի ծառայություն:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Վարդանյանն առաջարկեց առաջնորդվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի փորձով և նշված աշխատողների (օրինակ՝ իրավաբանի) ծառայություններն ստանալ կոնկրետ մասնագիտացված կազմակերպությունների հետ պայմանագրի կնքման միջոցով: Տվյալ դեպքում մատուցվող ծառայության գինն անհամեմատ ցածր է:

ՀՀ ԱԺ պատգամավոր Կ. Ավագյանն առաջարկեց հաստատել հաստիքացուցակը և միայն անհրաժեշտության դեպքում աշխատող ընդունել:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական և հասարակայնության հետ կապերի ծառայության հիմնումը,

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին հաշվի առնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի փորձը և հաստիքային աշխատողների (օրինակ՝ իրավաբանի) ծառայություններն ստանալ կոնկրետ մասնագիտացված կազմակերպությունների հետ պայմանագրի կնքման միջոցով:

4. Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակը:

5. Հիմնադրամի 2011 թվականի բյուջեի հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ վարչական ծախսերը չեն գերազանցում ընդհանուր բյուջեի 20 տոկոսը: Մնացած գումարներն ուղղված են ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝

- 1) կրթության և գիտության ծրագրին՝ 120.0 մլն դրամ.
- 2) առողջ ապրելակերպի ծրագրին՝ 95.0 մլն դրամ.
- 3) սոցիալ-տնտեսական և զբաղվածության խնդիրներին՝ 95.0 մլն դրամ.
- 4) հոգևոր, հայրենասիրական, մշակութային դաստիարակությանը՝ 120.0 մլն դրամ.
- 5) միջազգային և համահայկական ծրագրերին՝ 25.0 մլն դրամ.
- 6) մարզային կենտրոնների ծրագրերին՝ 10.0 մլն դրամ

7) հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերին՝ 53 մլն 676 հազ. դրամ:

Ինչ վերաբերում է հիմնադրամի 2011 թվականի բյուջեի ծավալներին, ապա նշեց, որ նպատակահարմար է համարվել այն ներկայացնել առավելագույնս (լավատեսական տարբերակով)՝ խուսափելու համար հետագա փոփոխություններից ու վերաբաշխումներից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը, անդրադառնալով 2011 թվականի համար նախատեսված գումարի չափին, համարեց ոչ իրատեսական, քանի որ 2010 թվականի ընթացքում բուհական ծրագիրն իրականացվել էր շնորհիվ ՀՀ կրթության և գիտության նախարարության բյուջետային հատկացումների տնտեսումների:

Ինչ վերաբերում է հիմնադրամի արտաբյուջետային հատկացումների ծավալներին, ապա դրանք ներկայացված են առավելագույնս, ինչը նույնպես կասկածելի է:

Այդ կապակցությամբ առաջարկեց՝

1) կրճատել «Աջակցություն՝ բյուջետային դրամաշնորհների հաշվին» հոդվածը և 118.0 մլն դրամի փոխարեն նախատեսել 58.0 մլն դրամ.

2) հաստատել հիմնադրամի 2011 թվականի բյուջեի նախագիծը՝ հետագա փոփոխությունների հնարավորությամբ.

3) քննարկման առարկա դարձնել Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի պահպանման և աշխատողների աշխատավարձերի վճարման համար նախատեսված ծախսերի նպատակահարմարության հարցը, քանի որ շենքային վատ պայմանների հետևանքով տվյալ կենտրոնը նույն տարածաշրջանում գտնվում է անմրցունակ վիճակում:

ՀՀ Նախագահի խորհրդականի օգնական Ա. Բերբերյանն առաջարկեց քննարկման առարկա դարձնել Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի գործունեության հետ կապված հարցերը:

Դրանից բացի՝ տեղեկացրեց, որ նախատեսվում է իրականացնել նոր ծրագիր՝ գյուղական շրջանների երիտասարդների համար: Արդյունքում նախատեսվում է լուսաբանել վարկավորման ամբողջ գործընթացը և դրա արդյունավետությունը:

6. Այլ հարցեր

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամ-
յանն** առաջարկեց հետագա նիստերի նյութերը հոգաբարձուների խորհրդի անդամներին
առաքել նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց ձևավորել պահուստային ֆոնդ,
որը կհամապատասխանի նաև ներկայիս գործող հաշվապահական հաշվառման
կանոններին:

Ինչ վերաբերում է գյուղական երիտասարդների ծրագրին, ապա նշեց, որ ՀԲ-ի
աջակցությամբ ստեղծվել է Գյուղացիների աջակցության կենտրոն: Ուստի, տվյալ ծրագրի
շրջանակներում անհրաժեշտ է համագործակցել ՓՄՁ կենտրոնների և Գյուղացիների
աջակցության կենտրոնի հետ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել հիմնադրամի 2011 թվականի բյուջեի նախագիծը՝ հետագա փոփոխու-
թյունների հնարավորությամբ.

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Տեր-Հովակիմյանին՝

ա. առաջնահերթությունը տալով կրթության և գիտության գծով նախատեսված
կրթաթոշակների ծրագրին՝ կրճատել այլ ծրագրերի գումարները և դրանք ուղղել տվյալ
ծրագրին,

դ. գյուղական երիտասարդների ծրագրի իրականացման գործընթացում սերտորեն
համագործակցել ՓՄՁ կենտրոնների և Գյուղացիների աջակցության կենտրոնի հետ.

3) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության
պետ Ա. Միրզախանյանին՝ Հայաստանի երիտասարդների հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ ապահովել օրակարգային նյութերի
տրամադրումը խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱԶԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԵՆ ՔԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՍՏԴԻԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ